ՀԱՅ ՄԻՋՆԱԴԱՐԵԱՆ ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐԸ «ՀԱՆԴԷՍ ԱՄՍՕՐԵԱՅ»-Ի ԷՋԵՐՈՒՄ

Սուրադ Հասրաթեան

Աւագագոյն հայագիտական պարբերականներից «Հանդէս ամսօրեան» պատմական, բանասիրական, արուեստաբանական եւ այլ թեմաներով ուշագրաւ եւ արժէքաւոր հրապարակումների հետ արդէն մէկ դարից աւել իր էջերը տրամադրում է նաեւ հայ մշակոյթի կարեւոր բնագաւառի՝ ճարտարապետութեան խնդիրների լուսաբանմանը:

Խորհրդանշական է, որ «Հանդէս ամսօրեան», իր «աւագ եղբայր» «Բազմավէպի» նման, ճարտարապետական թեմայով առաջին յօդուածը նոյնպէս նուիրեց Հայաստանի բազմաթիւ մայրաքաղաքներից ամենահռչակաւոր եւ հայ ժողովրդի սիրելի ոստանին՝ Անիին: 1904 թուականին Հանդէսում (թիւ 12) տպագրուեց Արամ Վրոյրի «Անիի պեղումների հետեւանքները» յօդուածը, որը արտատպութիւն էր, սակայն, «Մշակից» (թիւ 241): Յօդուածը եւրոպաբնակ հայ ընթերցողին ներկայացնում էր Նիկողայոս Մառի՝ Անիում իրականացուող պեղումների առաջին արդիւնքները:

1908 թ. տպագրուեց Հ. Աւետիսեանի «Անիի պեղումները» համառօտ հաղորդումը (թիւ 7):

Այս թեմայով (որը կարելի է անուանել «Անիագիտութիւն») յաջորդ հրապարակումն արդէն հանգամանալից եւ նոր խօսք էր: Դա Լէօի «Անիի պեղումները» յօդուածն էր (1908, թիւ 8): Մեծանուն պատմաբանը գրում է Ն. Մառի՝ տասնամեայ ընդմիջումից յետոյ Անիում վերսկսած պեղումների արդիւնքների մասին: Ներկայացնում է նորաբաց զուարթնոցատիպ Գագկաշէն Ս. Գրիգոր տաճարը, յատկապէս մանրամասնում խօսքն այնպիսի բացառիկ գտածոյի մասին, ինչպիսին Գագիկ Ա. Թագաւորի բոլորաքանդակ արձանն է: Թ. Թորամանեանի խորհրդաւորութեամբ խօսւում է աշխարհիկ ճարտարապետութեան արժէքաւոր ու եզակի՝ Անիի Միջնաբերդում Բագրատունիների պալատի մասին (պէտք է նշել, որ ուրիշ արքայական պալատ Հայաստանում, թէկուզ աւերակ, մեզ չի հասել):

Լէօն միանգամայն իրաւացի նշում է, որ Անին պատմաճարտարապետական տեսանկիւնից «բազմաշերտ» քաղաք է: Նա գտնում է, որ քաղաքն ունի, ըստ էութեան, երկու շրջան՝ Բագրատունիների եւ Զաքարեանների: Սակայն դեռ չէին ուսումնասիրուած Անիի Աղջկաբերդի եւ Միջնաբերդի վաղմիջնադարեան յուշարձանները. իրականում Անիի քաղաքաշինական զարգացումն ունեցել է նաեւ երրորդ, սկզբնական շրջանը՝ Կամսարականների:

Հանդէսը Անին չմոռացաւ նաեւ հեռաւոր 1940 թ., երբ տպագրեց Սարուխանի «Անի քաղաքը» յօդուածը՝ նուիրուած քաղաքի պատմութեանը եւ Ն. Մառի պեղումների արդիւնքներին:

1912 թ. «Հանդէս ամսօրեայում» տպագրուեց Ատրպետի «Դիրաքլարի տաճարը» յօդուածը (թիւ 1)՝ նուիրուած Կառնուտի վաղքրիստոնէական միանաւ եկեղեցուն: Թ. Թորամանեանի «Տեկորի տաճարը» յօդուածն ազդակ հանդիսացաւ Շիրակի յուշարձանների ուսումնասիրութեան համար: Նրա մասնակցութեամբ 1912 թ. գիտարշաւ կազմակերպուեց դէպի Կառնուտ, որի ընթացքում չափագրուեց, լուսանկարուեց այս հնագոյն եկեղեցին: Բազմաստիճան գետնախարսխի վրայ կանգուն,

հարաւից սիւնասրահով եկեղեցին 1830 թ. նորոգուել էր Արեւմտեան Հայաստանի Դերջան գաւառից գաղթածների ուժերով, որոնք ծածկել էին շէնքը եւ դարձրել գործող եկեղեցի: Ուսումնասիրութեան արդիւնքում Թ. Թորամանեանը կարծիք յայտնեց, որ այն նախապէս մեհեան է եղել, քրիստոնէութիւնն ընդունելիս վերափոխուել է եկեղեցու: Ատրպետի այս յօդուածն արժէքաւոր է իր փաստական նիւթերով, առաջին հերթին՝ լուսանկարներով, որովհետեւ անցած հարիւրամեակում յուշարձանը զգալի աւերուել է եւ շատ կարեւոր մանրամասներ անհետացել են:

«Հանդէս ամսօրեայում» հայկական ճարտարապետութեան վերաբերեալ հրապարակումները զգալի շատացան՝ կապուած աւստրիացի անուանի արուեստաբան Եօզէֆ Ստրժիգովսկու՝ Հայաստանի միջնադարեան շինարարական արուեստի եւ գեղարուեստի ուսումնասիրութեանը նուիրուած գործունէութեան շնորհիւ:

1913 թ. «Հանդէս ամսօրեայում» տպագրուեց Յ. Ստրժիգովսկու «Ճանապարհորդական տպաւորութիւններ Կովկասէն» յօդուածը (թիւ 1), որտեղ հեղինակը օրագրի ձեւով նկարագրում է իր այցելութիւնը Հայաստան, ծանօթութիւնը հայ արուեստագէտների եւ, ընդհանրապէս, հայ մտաւորականութեան հետ:

1916 թ. դրան յաջորդեց Հ. Մ. Հապոզեանի ընդարձակ գրախօսական-հետազօտական յօդուածը՝ նուիրուած աւստրիացի գիտնականի՝ Լայպցիգում 1916 թ. գերմաներէն տպագրուած «Արեւելքի շինարարական արուեստը» աշխատանքին: Գրախօսը դրուատանքով ներկայացնում է Արեւմուտքի արուեստագիտութեան համար Յ. Ստրժիգովսկու անսպասելի եւ յեղափոխական տեսակէտները: Ըստ նրա՝ քրիստոնէական արուեստի կենտրոնը Արեւելքն էր, այլ ոչ թէ Հռոմը ու Բիւզանդիան, ինչպէս ընդունուած էր արեւմտաեւրոպական արուեստաբանութիւնում: Յ. Ստրժիգովսկին համարում էր, որ հայկական եկեղեցիներն ի սկզբանէ քարաշէն գմբէթով են կառուցուել, եւ, ընդհանրապէս, եկեղեցին գմբէթաւորուել է առաջին քրիստոնէական երկիր Հայաստանում: Հ. Մ. Հապոզեանի գրախօսականում լուսանկարների հետ ներկայացուում են նաեւ որոշ հայկական յուշարձանների յատակագծեր (Արուճ, Բագարան), իսկ դա անհրաժեշտ է ճարտարապետական թեմաներով յօդուածներ տպագրելիս: Բագարանի Ս. Թէոդորոս Է. դ. եկեղեցու յատակագիծը յատկապէս կարեւոր է, որովհետեւ Յ. Ստրժիգովսկին նշում է, որ Լէոնարդո դա Վինչին քրիստոնէական տաճարի նախագծի իր էսքիզներում փաստօրէն կրկնում է Բագարանի յատակագիծը:

1919 թ. տպուեց եւ 1920 թ. թիւ 8 եւ թիւ 11-12 համարներում շարունակուեց Յ. Ստրժիգովսկու «Լէոնարդո-Բրամանտէ-Վինեօլա. համեմատական գեղարուեստաքննութեան շրջանակի մէջ» յօդուածը (Հ. Հ. Ոսկեանի թարգմանութեամբ), որում հեղինակը ներկայացնում է հայկական ճարտարապետութեան ինքնատիպ նկարագիրը՝ իտալական Վերածնդի նշանաւոր ճարտարապետական ստեղծագործութիւնների հետ համեմատ:

Յ. Ստրժիգովսկին եւ 1918 թ. հրատարակած իր «Հայերի ճարտարապետութիւնը ու Եւրոպան» կոթողային աշխատութեան դրոյթներն իրենց անդրադարձն ունեն Հանդէսի 1924 թ. թիւ 5-6 համարում տպագրուած Հ. Ս. Կոգեանի «Կառլ Ռոթը (Karl Roth) հայկական ճարտարապետութեան մասին» գրախօսականում՝ նուիրուած 1924 թ. բիւզանդագիտական ամսագրում գերմաներէն հրատարակուած յօդուածին: Վերջինիս հեղինակը գրում է, որ «Հայկական ճարտարապետութիւնը պահել է իր ինքնատիպ եւ սեփական դրոշմը, որովհետեւ այդպէս է հայ ժողովրդի նկարագիրը», «Ստրժիգովսկին ցոյց է տալիս ճանապարհը, սակայն դա

ճանապարհի սկիզբն է», «Երանի թէ գեղարուեստագէտ շրջանները հասկանային, որ Ստրժիգովսկու մատնանշած ճանապարհով միայն կարելի է ճշմարտութեան հասնել»:

1927 թ. հանդէսի բացառիկում (թիւ 11-12) տպագրուած J. Schwieger (Վիեննայի համալսարանից), "Neue Wege zur Erforchung von Ursprungsfragen altarmenicher Kirchenbauten" յօդուածը՝ գրուած Յ. Ստրժիգովսկու նիւթերի հիման վրայ, նուիրուած հայկական վաղմիջնադարեան եւ միջնադարեան հանգուցային յուշարձաններին (Տեկորի, Օձունի, Մրենի, Էջմիածնի Ս. Գայիանէ գմբէթաւոր բազիլիկներին, Ս. Հռիփսիմէ, Զուարթնոց տաճարներին, Աղթամարի Ս. Խաչ, Կարսի Առաքելոց, Անիի Փրկչի եկեղեցիներին), պարունակում է, լուսանկարներից բացի, նաեւ յատակագծեր եւ կտրուածքներ, որոնք զգալի արժեւորում են հրապարակուած աշխատանքը:

Պարբերականի էջերում Հ. Ներսէս Ակինեանը 1930-ական թթ. առաջին տարիներին հայ մշակոյթի, ճարտարապետութեան երախտաւորների, ցաւօք, մահախօսականներով հանդէս եկաւ: 1934 թ. (թիւ 3-4) դա նուիրուած էր Թորոս Թորամանեանի յիշատակին: Հեղինակի բնորոշմամբ «Թ. Թորամանեանն առաջինը եղաւ Հայոց մէջ, որ իբրեւ ճարտարապետ, նուիրուեցաւ հայ շինարուեստի ուսումնասիրութեան, բերաւ երեւան հայ արուեստի ինքնուրոյն նկարագիրը»: Վերջում տրւում է նաեւ Թ. Թորամանեանի աշխատութիւնների ցանկը: Իսկ 1935 թ. (թիւ 3-4) Հ. Ներսէս Ակինեանի գրած մահախօսականը վերաբերում էր հայագիտութեան մի այլ նուիրեալի՝ Նիկողայոս Մառի յիշատակին: Նշելով յանգուցեալի մեծ աւանդը հայ պատմութեան, վիմագրութեան, լեզուաբանութեան, հնագիտութեան բնագաւառներում՝ հեղինակը շեշտում է Ն. Մառի մեծ աւանդը միջնադարեան Հայաստանի մայրաքաղաք Անիի եւ նրա ճարտարապետական յուշարձանների ուսումնասիրութեան գործում: Վերջում տրւում է Ն. Մառի աշխատութիւնների մատենագիտութիւնը՝ հետեւեալ ենթաբաժանումներով. ա) բանասիրական, բ) հնագիտական, գ) լեզուաբանական:

Հանդէսի 1935 թ. թիւ 5-7 եւ թիւ 8-9 համարներում տպագրուեց Հ. Սահակ Կոգեանի գրախօսականը "D. R. Buxton, Russian Mediaeval Architecture, Cambridge, 1934" գրքի մասին, «Հայ ճարտարապետութիւնը յԱնդրկովկաս ըստ D. R. Buxton-ի» խորագրով: Այս ուշագրաւ եւ արժէքաւոր գրքում (ի դէպ, Հայաստանում գրեթէ անծանօթ) մանրամասն ներկայացւում են Յ. Ստրժիգովսկու տեսակէտները հայկական ճարտարապետութեան վերաբերեալ, խօսւում է նրա եւ Ռիւոյրայի տեսակէտների հակադրութեան մասին, նշւում է Արեւմուտքում կովկասեան շինարուեստի ազդեցութիւնը եւ փաստւում, որ քառակուսի հիմքի վրայ գմբէթի իրականացումը հայկական ծագում ունի:

Հ. Սահակ Կոգեանի յաջորդ ուշագրաւ գրախօսականը "J. Arnott Hamilton, Byzantine Architecture and decoration, London, 1933" գրքի մասին է («Հանդէս ամսօրեայ», 1936, թիւ 4-6): Ներկայացւում են հեղինակի՝ հայանպաստ տեսակէտները, ինչպէս օրինակ՝ «քառախորան քառակուսի» եկեղեցական շէնքի յօրինուածքի բնիկ հայկական լինելը, խաչագմբէթ բազիլիկայի (Դուին, Թալին) տիպի Հայաստանեան ծագումը: Մէջբերւում են հեղինակի հետեւեալ խօսքերը. «Բիւզանդիան քիչ չէր ազդուել այս ճարպիկ եւ ճարտար ազգի մշակոյթից, որի հանճարն ու ձեռներէցութիւնը նրա ազդեցութիւնը սեփական լեռնաշխարհի սահմաններից դուրս տարածեց»:

1938 թուականից մինչեւ 1961 թ. նեբրաւեալ, շուրջ 23 տարի, «Հանդէս ամսօրեայի» էջերում հայկական ճարտարապետութեանը վերաբերող բոլոր նիւթերը պատկանում են Հ. Համազասպ Ոսկեանին՝

մի մարդու, որը մօտ քառորդ դար կեանքը նուիրեց միջնադարեան Հայաստանի գրեթէ բոլոր վանքերի պատմութեանը, վիմագրութեանը, գիտական մանրամասն նկարագրութեանը՝ այս բոլորը զուգակցելով պատկարեզարդումով: Առանց չափազանցութեան կարելի է ասել, որ Հ. Ոսկեանը կատարեց մի ամբողջ գիտահետազօտական հաստատութեան աշխատանք, որը ժամանակի ընթացքում չի կորցնի իր տեղեկատուական եւ գիտական արժէքը:

«Հանդէս ամսօրեայի» էջերում Հ. Հ. Ոսկեանի հրապարակումների միայն վերնագրերը նշելն արդէն տեղ կը գրաւի: Բայց անհրաժեշտ է այդ բոլորը թուարկել, որպէսզի պարզ դառնայ նրա գործի հսկայածաւալ լինելը:

Առաջին աշխատանքն էր «Լիմ անապատը» (1938, թիւ 9-12), որին, առանց ընդմիջման, յաջորդեցին «Ռշտունեաց գաւառի վանքերը» (1939, թիւ 7-12, 1940, թիւ 1-6), «Վան-Տոսպի վանքերը» (1940, թիւ 7-12), «Գնունեաց եւ Առբերանիի վանքերը» (1940, թիւ 7-12), «Արտազի վանքը» (1941, թիւ 1-6), «Արճիշահովտի, Քաջբերունեաց եւ Արծկէի վանքերը» (1941, թիւ 1-6), «Նախճաւանի վանքերը» (1941, թիւ 7-12), «Գողթնի վանքերը» (1942, թիւ 1-6), «Անձեւացեաց, Բողունիքի, Երուանդունիքի եւ Աղբակի վանքերը» (1942, թիւ 7-12), «Մոկաց, Խիզանի եւ Շատախի վանքերը» (1973, 1944), «Սալնաձոր-Բաղեշի վանքերը» (1944), «Սեբաստիայի վանքերը» (1945), «Վասպուրական-Վանի վանքերու մասին ընդհանուր տեղեկութիւններ» (1946, 1947, թիւ 1, 2, 3, 4, 5, 6-7), «Բարձր Հայքի վանքերը» (1948, թիւ 9-12. 1949, թիւ 1-3, 1950, թիւ 1-3, 4-6, 7-9), «Քղիի եւ Խնուսի վանքերը» (1950, թիւ10-12), «Արցախի վանքերը» (1952, թիւ 1-3, 4-6, 7-9, 10-12: 1953, թիւ 1-3), «Սկեւռայի վանքը (1150-1200)», (1954, թիւ 1-6. 1955, թիւ 1-2, 3-6), «Կիլիկիայի վանքերը» (1955, թիւ 7-9, 10-12. 1956, թիւ 1-2, 3-6, 7-8, 9-12), «Գուգարքի վանքերը» (1957, թիւ 1-2, 3-5, 6-7), «Սանահինի վանքը» (1957, թիւ 8-10), «Սանահին եւ Հաղբատ վանքերի հիմնարկութիւնները եւ ընդհանուր տեղեկութիւններ նրանց մասին» (1958, թիւ 5-9, 11-12), «Սեբաստիա նահանգի վանքերը» (1959, թիւ 1-3), «Խարբերդի վանքերը» (1960, թիւ 4-6, 7-9, 10-12), «Տիարբեքիրի կամ Տիգրանակերտի նահանգի վանքերը» (1961, թիւ 1-4), «Տրապիզոնի նահանգի վանքերը» (1961, թիւ 5-9):

Յետագայում Հ. Հ. Ոսկեանի այս աշխատութիւնների մի մասը տպագրուեց առանձին գրքերով: Դրանց շարքում պէտք է առանձնացնել «Վասպուրական-Վանի վանքերը» (1940-47) եռահատոր, կոթողային աշխատանքը, որն այսօր՝ պատմական այդ նահանգի ճարտարապետութեամբ զբաղուող իւրաքանչիւր մասնագէտի համար սեղանի գիրք է հանդիսանում:

1962 թուականը նշանաւորուեց մասնագէտ-ճարտարապետի առաջին մասնակցութեամբ «Հանդէս ամսօրեայի» էջերում. Արմէն Խաչատրեանը (Փարիզ) 1950-ական թուականներին իրականացուած՝ Էջմիածնի Մայր տաճարի պեղումների նիւթերի հիման վրայ առաջարկեց իր տեսակէտը քրիստոնէական առաջին պաշտամունքային շէնքի սկզբնական յօրինուածքի վերաբերեալ (A. Khatchatrian. Données historiques sur la fondation d'Etchmiadsin a` la lumière des feuilles récentes. թիւ 5-8): Մինչ այդ պեղումների ղեկավար Ա. Սահինեանը ներկայացրել էր գիտական պարբերականներում, գիտաժողովներում իր կարծիքը. ըստ նրա՝ Մայր տաճարի Լուսաւորչաշէն կառոյցը եղել էր եռանաւ բազիլիկ: Ա. Խաչատրեանը պեղումների նիւթերի համոզիչ վերլուծութեամբ, զուգակցուած ս. Գրիգոր Լուսաւորչի տեսիլքում առկայ՝ տաճարի նկարագրի հետ, առաջ է քաշում իր տեսա-

կէտը, ըստ որի Էջմիածնի Մայր տաճարը սկզբից եւեթ հիմնադրուել է քառամոյթ գմբէթաւոր ամպհովանու յօրինուածքով: Հեղինակը շեշտում է, որ տեսիլքն ունի ճարտարապետական արժէք՝ հաստատուած 1955–56 թթ. եւ 1959 թթ. պեղումներով:

1965 թ. ճարտարապետական թեմայով տպագրուեց երկու գրախօսական (թիւ 7-9): Առաջինը Մ. Գրիգորեանինն էր՝ Ս. Տէր-Ներսիսեանի՝ Աղթամարի Ս. Խաչ եկեղեցուն նուիրուած գրքի մասին (S. Der Nersessian, Aghtamar Church of the Holy Cross, Cambridge, 1965), միւսը Հ. Հ. Ոսկեանինն էր՝ Վ. Յարութիւնեանի «Անի քաղաքը» (Երեւան, 1964) մենագրութեան վերաբերեալ:

Ս. Տէր-Ներսիսեանը յուշարձանի՝ իր անձնական ուսումնասիրութիւնների հիման վրայ տալիս է հայ մշակոյթի գլուխգործոց Աղթամարի Ս. Խաչ եկեղեցու ճարտարապետութեան, պատկերաքանդակների, որմնանկարների խոր, գիտական-արուեստաբանական վերլուծութիւնը: Իսկ Վ. Յարութիւնեանը Ն. Մառի եւ Թ. Թորամանեանի նիւթերի հիման վրայ ընթերցող հայ հասարակութեանը ներկայացնում է Հայաստանի երբեմնի մայրաքաղաքի քաղաքաշինական եւ ճարտարապետական նկարագիրը, եկեղեցական եւ աշխարհիկ շէնքերը, որոնցից իւրաքանչիւրը շինարարական արուեստի գլուխգործոց է:

1968 թ. տպուեց Լ. Մինասեանի «Հնադարեան մի կամուրջ Ատրպատականում» յօդուածը (թիւ 4-6): Ներկայացուում է Մակու քաղաքից 2 կմ հեռու՝ դէպի Խոյ տանող ճանապարհին, Տզմուտ գետի վրայ կանգուն բազմաթռիչք կամուրջը: Ըստ հայերէն շինարարական արձանագրութեան՝ այն ԺԴ. դ. կառուցել է Ս. Թադէի վանքի վանահօր եղբայր Պետրոսը՝ Ակոբ վարդապետի (ճարտարապետ-շինարարի) ձեռքով: Կենտրոնական՝ մեծ կամարի երկու կողմից կան երեքական աւելի փոքր, սլաքաձեւ ուրուագծով կամարներ: Չնայած դարերի ընթացքում կամարներից երեքը հեղեղումներից աւերուել են, սակայն այսօր էլ հայ վարպետների շինած այս հոյակապ ինժեներական կառոյցը հիացնում է տեսնողին:

Կարեւոր է Հ. Պ. Տէր-Պողոսեանի ընդարձակ գրախօսականը վրացի Գ. Զուբինաշուիլու՝ հայ ճարտարապետութեանը նուիրուած գրքի՝ (Г. Н. Чубинашвили. Разыскания по армянской архитектуре. Тбилиси. 1967) մասին, տպուած 1968 թ. (թիւ 7-9):

Գրախօսը դիպուկ բնութագրում է գրքի էութիւնը եւ նպատակը՝ «Հակառակ փաստերի՝ Զուբինաշուիլին իր սեւեռուն գաղափարին կառչած, VII դ. կառուցուած շատ հայկական յուշարձաններ քմածին կերպով տեղափոխում է յետին դարեր»:

Հ. Պ. Տէր-Պողոսեանը այդ հակագիտական նկրտումի հերքման համար մէջբերում է Պ. Մուրադեանի յօդուածը վրացական ճարտարապետութեան գլուխգործոց Մցխէթի Զուարի եկեղեցու մասին (որը, ըստ Զուբինաշուիլու, ազդել եւ սկզբնաղբիւր է եղել հայկական վաղմիջնադարեան նոյնատիպ յուշարձանների համար), որտեղ վիմագրական փաստերով ցոյց է տրուում, որ այդ եկեղեցու ճարտարապետը հայազգի թոդոսակն է, եւ շինարար վարպետները հայեր են:

1970-1973 թթ. «Հանդէս ամսօրեայի» էջերում շարունակական տպագրուեց Հ. Ե. Պողոսեանի շատ շահեկան «Պալեան գերդաստան» ուսումնասիրութիւնը՝ նուիրուած ճարտարապետների այդ հռչակաւոր տոհմի ստեղծագործութիւններին (1970, թիւ 1-3, 4-6, 10-12. 1971, թիւ 1-3, 4-6. 1972, թիւ 1-3, 4-6, 10-12. 1973, թիւ 1-3): Շուրջ երեք դար տեւող իրենց եռանդուն գործունէութեամբ Պալեանները կառուցեցին Օսմանեան կայսրութեան մայրաքաղաքում եւ վերջինիս կազմի մէջ մտնող այլ երկրներում բազմաթիւ աշխարհիկ (հիմնականում՝ պալատներ), պաշտամունքային (եկեղեցիներ, մզկիթներ) եւ տարբեր բնոյթի ուրիշ կոթողային շէնքեր, որոնք դարձան Ստամբուլի եւ այլ քաղաքների զարդը: Նրանք եւրոպականացրին թուրքական ճարտարապետութիւնը եւ խթանեցին վերջինիս յետագայ զարգացումը:

1974 թուականից սկսւում է «Հանդէս ամսօրեայի» համագործակցութիւնը հայ ճարտարապետական ժառանգութեան ուսումնասիրութեան երախտաւոր դոկտոր Ժան-Միշել Թիերիի հետ: Ֆրանսիացի գիտնականն իր կեանքի կէս դարը նուիրեց հայկական միջնադարեան յուշարձանների եւ յուշարձանախմբերի հետազօտութեանը: Իր նախաձեռնութեամբ, արուեստաբան կնոջ՝ Նիկոլ Թիերիի հետ, պարբերաբար կազմակերպած գիտարշաւների ընթացքում ուսումնասիրեց Արեւմտեան Հայաստանի հայկական վանքային համալիրները եւ առանձին եկեղեցիները, աշխարհիկ միջնադարեան կառոյցները եւ արդիւնքները տպագրեց եւրոպական գիտական պարբերականներում, որոնց թւում նաեւ՝ «Հանդէս ամսօրեայում»: Դր. Թիերիի հրապարակումները աչքի են ընկնում պատմական, վիմագրական մանրակրկիտ հետազօտութեամբ, բոլոր գրաւոր աղբիւրների քննական օգտագործումով: Նա Սորբոնի համալսարանում յատուկ սովորեց գրաբար, որպէսզի հայերէն արձանագրութիւնները (մեծ մասամբ՝ մինչ այդ անյայտ) եւ պատմական սկզբնաղբիւրները չմիջնորդուած կիրառի իր բազմաթիւ յօդուածներում եւ դրանց հիման վրայ տպուած մեծածաւալ մենագրութիւններում:

«Հանդէս ամսօրեային» նա աշխատակցեց 21 տարի: Այդ ընթացքում տպագրեց Արեւմտեան Հայաստանի բազմաթիւ յուշարձանների վերաբերեալ իր նիւթերը, որոնց մեծ մասի առաջին հետազօտողը հէնց ինքը եղաւ: Դրանք են՝ 1974. L'eglise Saint-Anania de Por (թիւ 4-6): 1976. Le couvent des Saint-Anania de Por: 1983. Notes d'un voyage archéologique en Turquie Orientale (թիւ 7-12): L'eglise Sains-Etrienne de Norvans: 1989. Voyage archéologique en Turquie Orientale, II: 1993. Voyage archéologique en Turque Orientale, III: 1995. La Région de Divrik: 1960-ական թուականներին Թուրքիայի տարածքի շատ յուշարձաններ, որոնք այդ տարիներին կանգուն էին կամ կիսաւեր, արդէն գոյութիւն չունեն, կամ աւերակ են, եւ, դր. Թիերի նիւթերն այսօր սկզբնաղբիւրի արժէք ունեն:

1977 թ., փաստօրէն առաջին անգամ, Խորհրդային Հայաստանից Հեղինակի գործ տպագրուեց «Հանդէս ամսօրեայի» էջերում: Դա Մ. Հասրաթեանի «Արգինայի կաթողիկէն» յօդուածն էր, որում գերմանացի ճարտարապետ Օտտո Վէյբրեխտի մշակած մեթոդի օգնութեամբ, արխիւային լուսանկարների հիման վրայ (այսօր միջնադարեան Հայաստանի հանճարեղ ճարտարապետ Տրդատի վաւերական այդ առաջին գործը գոյութիւն չունի) վերականգնուում են Կաթողիկէի յատակագծի իրական չափերը: Դրանով հնարաւորութիւն է ստեղծուում հայկական ճարտարապետութեան զարգացման պատմութեան համար կարեւոր ու հանգուցային այս յուշարձանը լիարժէք ներկայացնել մասնագիտական գրականութիւնում: Յօդուածում վերլուծուած է Կաթողիկէի ճարտարապետական յօրինուածքը, համաչափական համակարգը: Պարզուած է հետաքրքրական փաստ՝ Տրդատի կառուցած հայկական ճարտարապետութեան գլուխգործոց Անիի Մայր տաճարը ուղիղ երկու անգամ մեծ է (յատակագծում) իր նախորդ՝ Հայաստանի Մայր եկեղեցի Արգինայի Կաթողիկէից:

1981 թ. «Հանդէս ամսօրեայում» տպագրուեց Հ. Հելլենկեմպերի՝ Եդեսիայի կոմսութեան եւ Կիլիկիայի հայկական թագաւորութեան ամրոցների 1968-1975 թթ. ուսումնասիրութեան արդիւնքները: Առաջին անգամ մասնագիտական խօսք ասուեց

Կիլիկիայի ամրաշինական արուեստի մասին, չափագրուեցին այդ պաշտպանական համալիրների յատակագծերը:

1988 թ. «Հանդէս ամսօրեայում» հրատարակուեց Լ. Զուքասզեանի շահեկան յօդուածը Յ. Ստրժիգովսկուց յետոյ հայկական շինարարական արուեստի արեւմտեան միւս խոշոր հետազօտողի մասին: «Իւրգիս Բալթրուշայտիսը եւ հայ իրականութիւնը» խորագրով այս հրապարակման մէջ տրւում է գիտնականի վաստակի դիպուկ բնորոշումը՝ «Ի. Բալթրուշայտիսի՝ հայ արուեստին նուիրուած երկերը ոչ միայն ներկայացնում են հայոց աւանդը եւրոպական ճարտարապետութեան մէջ, այլեւ նպաստում հայ արուեստի համամարդկային հնչեղութիւնը բացայայտելուն»:

1989 թ. տպուեց նոյն հեղինակի ընդարձակ գրախօսականը Ռ. Էդուարդսի «Հայկական Կիլիկիայի բերդերը» գրքի մասին: Այս ուսումնասիրութիւնը Հ. Հելլենկեմպերի աշխատանքի համեմատ աւելի ընդարձակ է, աւելի հարուստ է չափագրական նիւթերով եւ, յիրաւի, աւանդ է Կիլիկիայի հայկական ճարտարապետութեան ուսումնասիրութեան գործում:

Հայաստանի՝ անկախութիւն ձեռք բերելուց յետոյ նոր, ուշագրաւ երեւոյթ առաջացաւ: Դա Հայաստանի Հանրապետութեան հայագէտների, կարելի է ասել՝ զանգուածային համագործակցութիւնն է «Հանդէս ամսօրեայի» հետ: Վերացել էին խորհրդային իշխանութեան տարիներին գործող սահմանափակումները, փաստօրէն արգելքները՝ այդ գործում, եւ դա նպաստեց Հայաստանի գիտնականների, որոնց թւում՝ ճարտարապետութեան մասնագէտների, մուտքին պարբերականի էջեր:

1996 թ. տպագրուեց այդ բնագաւառի երկու յօդուած՝ Գ. Քոչարեանի «Անտիկ Դուինը Արտաշատի պաշտպանական համակարգում» (անգլերէն ընդարձակ ամփոփումով, որը կարեւոր է) եւ Ա. Գրիգորեանի «Ժողովրդական բնակելի տների ճարտարապետական նախաստեղծ տարրերի տիպաբանութիւնը խորհրդանշանային մտածողութեան շրջանակներում» («Հանդէս ամսօրեայում» Ա. Գրիգորեանի յաջորդ յօդուածը՝ 1998 թ. եւս նուիրուած էր այդ թեմային՝ «Կլոր, ուղղանկիւն, եռանկիւնի յօրինուածքները եւ քառակողմ ու եռաբաժան համակարգերը հայ ճարտարապետութիւնում»):

1997 թ. տպագրուած յօդուածներն են՝ Ա. Ջալալեանի «Հայ քաղկեդոնականների ճարտարապետական գործունէութիւնը ԺԲ.-ԺԳ. դարերում» եւ Գ. Շախկեանի «Տաճար եւ եկեղեցի տերմինների կիրառութեան շուրջը (հարցադրման կարգով)»:

Ա. Ջալալեանի յօդուածը, գիտականից բացի, նաեւ ունի քաղաքական նշանակութիւն: Հիւսիսային Հայաստանի մի շարք վանքեր (Քոբայր, Խուճապ, Պղնձահանք, Կիրանց) ԺԳ. դ. կառուցուեցին որպէս յունադաւան ծէսին հետեւող հայերի կրօնական կենտրոններ: Այսօր հարեւան Վրաստանը յաւակնում է այդ վանքերին՝ համարելով դրանք վրացական: Ա. Ջալալեանը պատմական փաստերով եւ ճարտարապետական վերլուծութեամբ համոզիչ հիմնաւորում է, որ այդ համալիրները հայկական շինարարական արուեստի ստեղծագործութիւններ են եւ Լոռի-Գուգարքի քաղկեդոնական հայերի կառուցածն են:

Գ. Շախկեանը հետաքրքիր հարցադրում է անում. հայերէն ճարտարապետական գրականութեան մէջ կաթողիկէները կամ քիչ թէ շատ խոշոր եկեղեցիները «տաճար» են անուանւում, որը ճիշտ չէ: Նա առաջարկում է «տաճար» տերմինը կիրառել իր սկզբնական՝ հեթանոսական պաշտամունքային կառոյցի իմաստով, իսկ նշանակալից եկեղեցիները՝ «Կաթողիկէ» կամ «Մայր եկեղեցի» կոչել: Դա համոզիչ է, միայն կարելի է բացառութիւն անել Էջմիածնի Մայր տաճարի, Զուարթնոցի եւ Անիի Մայր տաճարի համար, որոնց արդէն դարեր շարունակ հայ ժողովուրդը «տաճար» է անուանում:

Ճարտարապետական մասնագիտական գրականութեան մէջ կիրառուող մի տերմինի խնդրի շուրջն է մտորում Ա. Զարեանը: 1993 թ. «Հանդէս ամսօրեայում» տպագրուած նրա «Արդեօք միջնադա՞ր» յօդուածում նա գտնում է, որ Հայաստանի՝ Է. դ. եւ դրան յաջորդող ժամանակաշրջանի հայկական ճարտարապետութիւնը «միջնադարեան» անուանելը ճիշտ չէ: Արեւմուտքում նախավերածննդեան եւրոպական մշակոյթը կոչում են «միջնադարեան»՝ հակալուսաւորչական, գրեթէ, «բարբարոսական» իմաստով: Այնինչ, Ժ.-ԺԱ. դդ. հայկական մշակոյթը՝ իր գրականութեամբ, արուեստով, ճարտարապետութեամբ միանգամայն տեղին կարելի է «վերածննդեան» անուանել: Հանճարեղ Նարեկացու, Տրդատ ճարտարապետի, այդ ժամանակաշրջանի հայ իմաստասէրների ստեղծագործութիւններն առաջադիմական էին՝ «վերածննդեան» չափանիշներով, եւ իրենց նկարագրով նախորդել են եւրոպական մշակոյթի զարթօնքին:

2000 թ. տպագրուած Ա. Յակոբեանի «Ծիծեռնավանքի եկեղեցու անուանումը, նահատակի գերեզմանը եւ շինարարական փուլերը» յօդուածը նուիրուած է վաղքրիստոնէական հայկական միակ կանգուն վիճակում մեզ հասած եռանաւ բազիլիկի ուսումնասիրութեան արդիւնքների հիման վրայ առաջ քաշած իր տեսակէտներին (որոշները՝ վիճելի):

2001 թ. Տ. Մարութեանի «Լեկիթի բոլորակ տաճարը» աշխատանքում հեղինակը տալիս է Աղուանքի իշխան Ջիւանշիրի՝ Է. դ. Զուարթնոցի ազդեցութեամբ (որի օծմանը նա ներկայ էր) կառուցած եկեղեցու յօրինուածքի վերակազմութիւնը:

Ն. Ղարիբեանը վերջին տարիներին երկու յօդուած տպագրեց «Հանդէս ամսօրեայում»: 2008 թ. «Վահան Մամիկոնեանի՝ Էջմիածնի Մայր տաճարի վերականգնման թուականի շուրջ» եւ 2010-ին՝ «Կիրառական եկեղեցաբանութիւն» գիտական նոր մեթոդ քրիստոնէական տաճարաշինութեան ուսումնասիրութեան համար» խորագրերով: Վերջինը տեսական բնոյթ ունի, որը ողջունելի է, որովհետեւ հայկական ճարտարապետութեան պատմութեան ուսումնասիրութիւնների թւում տեսական աշխատանքները քիչ են:

2010 թ. համարում տպուած ճարտարապետական թեմայով թղթակցութիւնը Կ. Մաթեւոսեանինն էր՝ «Արուճի հնագոյն բազիլիկ եկեղեցին» վերնագրով, որը վերաբերում է պեղումների արդիւնքում մի բացայայտման. Արուճի վաղմիջնադարեան բազիլիկ կառոյցը ոչ թէ պալատական դահլիճ է եղել (ինչպէս համարում էր Վ. Յարութիւնեանն իր ուսումնասիրութիւնում), այլ՝ Ե.-Զ. դդ. եռանաւ բազիլիկ եկեղեցի:

Ահա «Հանդէս ամսօրեայի»՝ հայ ճարտարապետութեան ուսումնասիրութեան գործում բերած նպաստի համառօտ պատկերը: Յուսով ենք, որ ճարտարապետների համագործակցութիւնը հայ աւագագոյն եւ հեղինակաւոր պարբերականի հետ յաջողութեամբ կը շարունակուի նաեւ ապագայում՝ իր կարեւոր լուման բերելով հայագիտութեան զարգացման գործում: